ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 83 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

21.10.2022 16:08

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը 2022թ. հոկտեմբերի 19-ին հյուրընկալել է Երևանի թիվ 83 ավագ դպրոցի հումանիտար՝ պատմաիրավագիտական հոսքի աշակերտներին:

Աշակերտներին ողջունել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը: Նա աշակերտների ուշադրությանն է ներկայացրել փաստաբանի դերն արդարադատության համակարգում, փաստաբանի գործառույթները և գործունեության առանձնահատկությունները, փաստաբան դառնալու ընթացակարգը և պայմանները, փաստաբանական դպրոցի և փաստաբանների պալատի գործառույթներն ու կառուցվածքը:

Հանդիպման ավարտին ուսանողները շրջել են Փաստաբանների պալատի վարչական շենքում, փաստաբանական դպրոցում և հանրային պաշտպանի գրասենյակում:

NASA





BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })